ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2193-Ա « 02 » հունիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 5-Ի
Հ.342-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի փետրվարի 5-ի «Գնումների գործընթացի կազմակերպման շրջանակներում պատասխանատու ստորաբաժանում սահմանելու և Երևանի քաղաքապետի 2023 թվականի օգոստոսի 14-ի N 2561-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հ.342-Ա որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Երևան քաղաքի Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի վերջնամասից մինչև Աճառյան փողոց երկաթգծի ծրագծով ավտոճանապարհի նախագծի տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության, նախագծանախահաշվային փաստաթղթերի, նախագծի փորձաքննության, ինչպես նաև տեխնիկական և հեղինակային հսկողության ու կապալային աշխատանքների ձեռքբերման նպատակով՝ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ) սահմանել որպես պատասխանատու ստորաբաժանում՝ հետևյալ կազմով.

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Սվետա Հարոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և ներդրումային ծրագրերի խմբի հանրային ներդրումային ծրագրերի ղեկավար

Պատասխանատու ստորաբաժանման անդամներ՝

Կարեն Ղալթախչյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի իրավաբանական հարցերի մասնագիտական խմբի ավագ իրավաբան
Նարինե Գյոլեցյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի զարգացման և ներդրումային ծրագրերի խմբի ավագ տնտեսագետ-վերլուծաբան
Լիլիթ Վարդանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի հողի օտարման և վերաբնակեցման մասնագետ

Վարդգես Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի համայնքային ծրագրերի իրականացման խմբի ղեկավարի տեղակալ
Հռիփսիմե Նանագուլյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրերի իրականացման խմբի գլխավոր ինժեներ
Ա. Օհանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի էներգաարդյունավետությանը միտված ծրագրերի իրականացման խմբի ֆինանսական մասնագետ

»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ